

## ՄԻԳՐԱՑԻՈՆ ԴԻՍԿՈՒՐՍԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ. 2014 Թ-Ի ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԸ

20-րդ դարի երկրորդ կեսից սկսած տեղաշարժի ազատությունը, այդ թվում և մարդկանց տեղաշարժի, սկսեց նշանակալի տեղ գրավել սոցիոլոգիական, այնուհետև նաև քաղաքագիտական ուսումնասիրությունների ոլորտում: Վերջին շրջանում միգրացիան դարձել է եվրոպական երկրներում քաղաքական օրակարգի առաջնահերթ հարցերից մեկը: Նշվածի մասին է վկայում նաև այն փաստը, որ ԵՄ-ի մակարդակում քննարկումներ են սկսել ընդհանուր միգրացիոն քաղաքականության մշակման ուղղությամբ: «Մենք չենք կարող լիովին տարբեր կանոններ ունենալ այս հարցի (խմբ.- միգրացիայի) շուրջ Եվրոպական միության անդամ 28 երկրներում. մենք ցանկանում ենք համագործակցել ազատ շուկայի շրջանակներում, որոշ չափով ունենք ընդհանուր արտաքին սահման, ունենք Շենգենը:

*Հանգուցային բաներ և արտահայտություններ*՝ միգրացիա, քաղաքական դիսկուրս, հանրային դիսկուրս, Եվրոպական խորհրդարան, համաեվրոպական ընտրություններ, աջ ծայրահեղական կուսակցություններ, պոպուլիզմ, հակաիսլամականություն, եվրոհոռետեսություն:

Մենք բոլորս հետևում ենք միջազգային կանոններին, ինչպես օրինակ, Ժնևյան կոնվենցիան, և ունենք մի շարք արժեքներ, որոնք բոլորս էլ ցանկանում ենք պաշտպանել: Սակայն, ի վերջո այս բոլորը հանգում են միգրացիային և տեղաշարժի ազատությանը», - հայտարարել է ԵՄ ներքին գործերի հանձնակատար

Սեսիլիա Մալստրյոմը<sup>1</sup>: Ժողովրդագրական փոփոխությունները ժամանակակից Եվրոպայում պայմանավորված են ինչպես եվրոպական այդ երկրների պատմական գաղութային անցյալով, այնպես էլ ժամանակակից աշխարհում առհասարակ տեղաշարժի, և մասնավորապես աշխատուժի տեղաշարժի դյուրացմամբ: Ավելին, եվրոպական երկրներում մասնեղական բնակչության հարաձուլում ավելացումը նույնիսկ պայմանավորում է այդ երկրների ներսում ընթացող հանրային դիսկուրսի ձևավորման գործընթացը: Փոփոխությունների աստիճանը հասկանալու համար մի փոքր անդրադարձ կատարենք վիճակագրությանը: Ըստ Եվրոպական վիճակագրական ծառայության՝ Եվրոստատի 2009թ-ի ընթացքում ԵՄ անդամ երկրների ընդհանուր բնակչությունն աճել է 1.4 միլիոնով, որի 37.3%-ն է շնորհիվ բնական աճի (այն սահմանվում է որպես ծնունդների և մահերի հարաբերակցություն): Շեշտվում է նաև, որ բնակչության աճի հիմնական պատճառը բացարձակ միգրացիան է (net migration), ինչն իր հերթին սահմանվում է որպես ներգաղթի և արտագաղթի հարաբերակցություն: 2009թ-ի բնակչության աճի 62.7%-ը կազմում է բացարձակ միգրացիայի արդյունք է<sup>2</sup>: Այս տվյալները ցույց են տալիս եվրոպական մայրցամաքում

<sup>1</sup> Sten Transcript: The Future of EU Migration Policy, Chatham House, [http://www.chathamhouse.org/sites/files/chathamhouse/home/chatham/public\\_html/sites/default/files/20140304EUMigrationMalmstrom.pdf](http://www.chathamhouse.org/sites/files/chathamhouse/home/chatham/public_html/sites/default/files/20140304EUMigrationMalmstrom.pdf) (4 March, 2014: accessed 24.06.2014)

<sup>2</sup> Sten Europe in figures: Eurostat yearbook 2011, Luxembourg: Publications Office of the European Union, 2011, էջ 123-129:

միգրացիայի հիմնախնդրի կարևորության աստիճանը:

Նշվածի համատեքստում, ինչպես արդարացիորեն նշում է ֆրանսիացի հետազոտող Ֆիլիպ Բուրբոն, դիսկուրսը և դրա հետազոտությունը մեծագույն կարևորություն ունի միգրացիայի անվտանգայնացման (securitization) հարցում: Լինելով անվտանգայնացման տեսության քննադատ՝ Բուրբոն, այնուամենայնիվ, շեշտում է, որ «այդ տեսության մեծագույն ուժը պիտակավորման կարևորության գիտակցումն է»: Հենց այս գիտակցումն էլ, ուսումնասիրության մեջ ներառում է զուտ նյութական գործոններից բացի նաև սոցիալ-մշակութային գործոններ<sup>1</sup>: Այս տեսանկյունից ելնելով՝ մենք ուսումնասիրել ենք եվրոպական մի շարք երկրներում միգրացիային առնչվող դիսկուրսը, մասնավորապես 2014թ-ի Եվրոպական խորհրդարանի ընտրությունների համատեքստում:

Հասկանալու համար թե ինչպիսի ազդեցություն ունեցան միգրացիային առնչվող հիմնախնդիրները Եվրոպական խորհրդարանի նախընտրական հանրային-քաղաքական դիսկուրսում, նախ համառոտ անդրադարձ կատարենք նշված ընտրությունների առանձնահատկություններին և արդյունքներին:

2014թ. Եվրոպական խորհրդարանի ընտրություններում առաջացան տարաբնույթ քննարկումներ և բանավեճեր՝ կապված ինչպես նախընտրական քարոզարշավի ընթացքի, այնպես էլ ընտրությունների արդյունքների հետ: Հիմնական մտահոգությունների թվում ակնհայտորեն առանձնանում էին Եվրոպական միության անդամ գրեթե բոլոր պետություններում աջ ծայրահեղական կուսակցությունների նշանակալի հաջողությունները, որոնք մտորելու և

լուրջ քննարկումների առիթ դարձան եվրոպական երկրների քաղաքական և ակադեմիական շրջանակներում: Մտահոգությունների առիթները տարաբնույթ էին՝ սկսած այդ կուսակցությունների եվրոհոռետեսական կամ եվրոսկեպտիկ հայացքներից մինչև վերջիններիս արտաքին քաղաքական կողմնորոշումները, և, ինչը թերևս առավել լայն քննարկումների հիմք հանդիսացավ, միգրացիայի հիմնախնդրի առնչությամբ նրանց դիրքորոշումը:

2014 թ. մայիսի 25-ին կայացան Եվրոպական խորհրդարանի հերթական ընտրությունները, որոնց արդյունքներով համաեվրոպական կուսակցություններից և որևէ մեկը ի վիճակի չէղավ մեծամասնություն կազմել Եվրոպական այս ինստիտուտում: Ընտրություններին մասնակցության ցուցանիշը ևս բարձր չէր. ընտրություններին մասնակցեց ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների 43.09%-ը: Ստորև ներկայացնում ենք ընտրությունների արդյունքները՝ ըստ Եվրոպական խորհրդարանի պաշտոնական կայքի<sup>2</sup>:

Կուսակցությունը	Ստացած ձայները տոկոսային արտահայտությամբ	Եվրոպական խորհրդարանում մանդատների քանակը
Եվրոպական ժողովրդական կուսակցություն (EPP)	29.43 %	221
Սոցիալիստների և դեմոկրատների առաջադիմական ալիանս (S&D)	25.43 %	191

<sup>1</sup> Stéu Bourbeau, *Philippe*. “Migration and Security: Securitization theory and its refinement.” San Diego: ISA // Disponivel em <http://www.ligi.ubc.ca/sites/liu/files/Publications/BourbeauISA2006Paper.pdf>. Consultado em 12 (2006).

<sup>2</sup> Stéu European Parliament/ Results of the 2014 European elections // <http://www.results-elections2014.eu/en/election-results-2014.html> (official website of the European Parliament, accessed 23.06.2014)

Եվրոպայի պահպանողականներ և ռեֆորմիստներ (ECR)	9.5 %	68
Եվրոպայի լիբերալների և դեմոկրատների ալիանս (ALDE)	8.92 %	67
Եվրոպայի միացյալ ձախ ուժեր (GUE)	6.92 %	52
Կանաչներ-Եվրոպական ազատ ալիանս (Greens/EFA)	6.66 %	50
Ազատության և ժողովրդավարության Եվրոպայի խումբ (EFD)	6.39 %	48
Պատգամավորներ, որոնք չեն պատկանում որևէ խմբի	5.73 %	43
Նոր ընտրված անդամներ, որոնք չեն միացել նախորդ խորհրդարանում ձևավորված որևէ խմբի	1.46 %	11

Արդյունքները մեծ մասամբ մեկնաբանվեցին Եվրոպական երկրներում որպես «բողոքական քվեարկություն», քվեարկություն ոչ թե «հանուն», այլ «ընդդեմ»: Միաժամանակ հարկ է հիշել, որ Եվրոպական խորհրդարանի ընտրությունները «ազգային քաղաքականությունների» շարունակությունն են, քանի որ ընտրողները մոտենում են քվեատուփերին արտահայտելու համար իրենց վերաբերմունքը «ազգային քաղաքական գործիչների» նկատմամբ<sup>1</sup>: Այս հա-

մատեքստում կարող ենք նշել նաև, որ համաեվրոպական ընտրություններում քաղաքական օրակարգը ձևավորվում է ազգային մակարդակում, քանի որ որոշակի կուսակցության կամ թեկնածուին ընտրելու քաղաքացու դրդապատճառները հիմնականում առաջանում են ազգային քաղաքական օրակարգը հաշվի առնելով: Նշվածի մասին են վկայում նաև Եվրոպական խորհրդարանի ազգային մակարդակի ընտրությունների արդյունքները, որտեղ ֆրանսիական «Ազգային ձակատ» կուսակցությունն (Front nationale) առաջին տեղը զբաղեցրեց՝ ստանալով ընտրողների 25% ձայները, մինչդեռ իշխող սոցիալիստական կուսակցությունը ստացավ ընդամենը 14%<sup>2</sup>, իսկ Մեծ Բրիտանիայում «Անկախության» կուսակցությունը (UKIP) նորագույն պատմության ընթացքում առաջին անգամ հաղթանակ տարավ բրիտանական ավանդական պահպանողական և լեյբորիստական կուսակցությունների հանդեպ՝ ստանալով ընտրողների ձայների 28%-ը<sup>3</sup>:

Այս ընտրությունների առանձնահատկությունների մեկն էլ Եվրոպական աջ ծայրահեղական կուսակցությունների նշանակալի առաջընթացը և նրանց ձևավորած քաղաքական օրակարգի առաջնային դեր զբաղեցնելը Եվրոպական երկրների քաղաքական դիսկուրսում:

Այս պարագայում հարց է առաջանում՝ ի՞նչն էր այս ընտրություններում ձևավորված քաղաքական օրակարգի առանձնահատկությունը և ինչու՞ հենց այս ընտրություններում ծայրահեղ աջակողմյան կուսակցությունները

<sup>1</sup> Sten Veuger, S., "European Parliament: Purposeful or Pitiful?" // The National Interest, <http://nationalinterest.org/feature/european-parliament-purposeful-or-pitiful-10564?page=show> (May 30, 2014: accessed 23.06.2014)

<sup>2</sup> Sten Traynor, I., "Front National wins European Parliament elections in France" // The Guardian, <http://www.theguardian.com/world/2014/may/25/france-national-front-win-european-elections> (May 25, 2014; accessed 23.06.2014)

<sup>3</sup> Sten Wintour, P. & Watt, N., "UKIP wins European elections with to set of political earthquake" // The Guardian, <http://www.theguardian.com/politics/2014/may/26/ukip-european-elections-political-earthquake> (May 26, 2014: accessed 23.06.2014)

առաջընթացի հնարավորություն ստացան համաեվրոպական քաղաքական ասպարեզում ու ինչպիսի քաղաքական հետևանքներ կարող են ունենալ նշված գարգացումները:

Այս հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է ընդհանրացնել այն մտտեցումներն ու դիրքորոշումները, որոնք աջ ծայրահեղական կուսակցությունները քաղաքական դիսկուրսի լուսանցքային (մարգինալ) օրակարգից տեղափոխեցին առաջնահերթ քաղաքական օրակարգ: Նշենք դրանցից երկու հիմնականները՝ միգրացիայի հիմնախնդիրը և եվրոհոռեոտությունը: Վերջինիս մասով հարկ է նշել, որ ձեռքբերումներ արձանագրած բոլոր աջակողմյան կուսակցությունները ցանկանում են լիազորությունների փոխանցում բրյուսելյան կենտրոնից դեպի ազգային մայրաքաղաքներ: Օրինակ՝ Բրիտանական անկախության կուսակցությունը եվրոպական խորհրդարանի ընտրություններին ընդառաջ ընդունած իր հռչակագրում նշում է, որ միայն ԵՄ-ից դուրս գալով է հնարավոր դադարեցնել այն շարունակական վնասը, որ հասցվում է Մեծ Բրիտանիայի ազգային շահերի<sup>1</sup>: Այլ եվրոպական երկրներում ևս աջ ծայրահեղական կուսակցություններն անվստահություն են հայտնում համաեվրոպական կառույցների գործունեության արդյունավետության հարցում, թերևս, տարբեր ուժգնությամբ ու առաջարկվող տարբեր լուծումներով:

Փորձենք առանձնացնել այն հիմնական ուղղությունները, որոնցով կիրառվել է միգրացիային առնչվող քաղաքական դիսկուրսը եվրոպական խորհրդարանի վերջին ընտրությունների ընթացքում: Շեշտենք այդ ուղղություններից հիմնական երեքը՝

միգրացիան որպես վախի և սպառնալիքի աղբյուր, որպես հակաիսլամականության աղբյուր, որը, թերևս, շատ ներհատուկ է եվրոպական պոպուլիստական քաղաքական դիսկուրսին, և սոցիալ-տնտեսական իրականությանը միգրացիային առնչվող դիսկուրսի անհամապատասխանություն: Նշված ուղղություններից առաջինը և երրորդը կիրառվել են նաև համաեվրոպական կառույցների նկատմամբ անվստահության տարածման և եվրոհոռեոտության ամրապնդման համար: Միևնույն ժամանակ նշված ուղղություններն ու հարցերը քննարկելու համար անհրաժեշտություն է առաջանում մասնավորեցնել, թե տվյալ աշխատանքում «քաղաքական դիսկուրս» հասկացության բազմաթիվ սահմանումներից որն ենք ընտրում առավել մեծ բացատրողական արդյունքի հասնելու համար: Այս համատեքստում մեզ համար թերևս առավել օգտակար սահմանումը տվել է քաղաքական դիսկուրսի երկարամյա հետազոտող, հոլանդացի Թեուն վան Դեյկը, ով քաղաքական դիսկուրսը դիտում է որպես քաղաքականության ակտորների կողմից ձևակերպված քաղաքական տեքստ կամ խոսք: Սակայն, նա միաժամանակ նշում է, որ հաղորդակցային տեսանկյունից կարևոր է և դիսկուրսի մաս է կազմում նաև այն արձագանքը, որ տալիս են այդ տեքստի կամ խոսքի «սպառողները», օրինակ՝ հանրությունը, քաղաքացիները, խմբերը և այլն<sup>2</sup>: Ուստի հետևելով այս մտքին՝ կփորձենք վեր հանել այն քաղաքական տեքստերը, որոնք նախընտրական շրջանում եվրոպացի քաղաքական գործիչներն օգտագործել են միգրացիան բնութագրելու համար և այն արձագանքը, որ ստացել են հանրության կամ քաղաքականության այլ ակտորների կողմից:

<sup>1</sup> Տե՛ս “Create an earthquake: UKIP MANIFESTO 2014” // <http://d3n8a8pro7vhmx.cloudfront.net/themes/5308a93901925b5b09000002/attachments/original/1398869254/EuroManifestoLaunch.pdf?1398869254> (accessed 23.06.2014)

<sup>2</sup> Տե՛ս Van Dijk, Teun A. “What is political discourse analysis?” *Belgian journal of linguistics* 11.1 (1997), էջ 11–52:

Առաջին դիտարկումը, որ ակնհայտ է դառնում Եվրոպական խորհրդարանի վերջին ընտրություններին առնչվող նախընտրական տեսքատերը ուսումնասիրելիս, միգրացիայի հանդեպ շարունակաբար վախի տարածումն է (fear mongering/ scare mongering): Միգրացիան իր ընդհանրության մեջ փորձ է արվում ներկայացնել որպես սպառնալիք Եվրոպական քաղաքակրթության, կենսակերպի, և, թերևս, ինչն ամենակարևորն է, Եվրոպական բարեկեցության գաղափարի հանդեպ: Միաժամանակ զանց է առնվում միգրացիայի դրական ազդեցությունը մի շարք Եվրոպական երկրների տնտեսական, և անհրաժեշտաբար նաև սոցիալական ծառայությունների ապահովման համակարգերի վրա: Պոպուլիստական դիսկուրսին բնորոշ կերպով Եվրոպական ծայրահեղ աջակողմյան կուսակցությունները համահարթեցնում են միգրացիայի նման բարդ սոցիալական երևույթը՝ այն հանրությանը ներկայացնելով զուտ բացասական համատեքստում: Նույնացվում են օրինական և անօրինական միգրացիան, մասնագիտական հմտություններով օժտված անհատների և ցածր կրթական ցենզ ունեցող անհատների ներգաղթը՝ այս ամբողջը մատուցելով որպես «սպառնալիք»:

Միաժամանակ հարկ է նշել, որ տարբեր Եվրոպական երկրներում մատուցվող այս «սպառնալիքի» տեսակները տարբեր են: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում հիմնականում կիրառվում է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ժողովուրդներին սպառնալիք ներկայացնելու ռազմավարությունը: Կրկին անդրադառնանք Մեծ Բրիտանիայի Անկախության կուսակցության նախընտրական հռչակագրին, որի «Կորցրել ենք վերահսկողությունը սեփական սահմանների նկատմամբ» ենթավերնագրի տակ կարդում ենք. «Հունվարի 1-ից Մեծ Բրիտանիան իր սահմանները բացեց Բուլղարիայի և Ռումինիայի ան-

սահմանափակ թվով քաղաքացիների առաջ: Կառավարությունն ընդունում է, որ չի կարող կառավարել ԵՄ երկրներից եկող միգրանտների քանակը: Այլ կուսակցությունները դեռևս հանձնառու են ԵՄ-ի ընդլայնմանը՝ ներառելով Թուրքիան, Ալբանիան, Մոլդովան և շատ այլ երկրներ: Ըստ ԵՄ կանոնների նրանց բոլոր քաղաքացիները հնարավորություն կունենան ապրելու և աշխատելու Մեծ Բրիտանիայում: Զանգվածային միգրացիան համընկնում է երիտասարդների գործազրկության աճի և աշխատավարձերի լճացած մակարդակի հետ, որոնք չեն համընկնում գների հետ», - նշվում է հռչակագրում<sup>1</sup>:

Ֆրանսիայում ևս այս հարցը բարձրացվում է այս անգամ «Ազգային ճակատ» կուսակցության կողմից: Կուսակցության ծրագրի մեջ նշվում է, որ ներկայում միգրացիան հասել է անկառավարելի չափերի, իսկ այս խնդրի լուծման համար նույնիսկ առաջարկվում է վերանայել Շենգենյան համաձայնագրերը և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան՝ տեղաշարժի իրավունքի մասով<sup>2</sup>: Կուսակցությունն իր պաշտոնական կայքէջում առաջարկում է քաղաքացիներին ստորագրել մի քանի խնդրագրեր, որոնք վերնագրված են հետևյալ կերպ՝ «Մեզ ևս հնարավորություն տվեք հանրաքվե անցկացնել ներգաղթի վերաբերյալ», «Ընդդեմ Ֆրանսիայի բալկանիզացիայի», «Ռումինիա, Բուլղարիա. սահմանների լիակատար բացումը խնեություն է»<sup>3</sup>: Նմանատիպ սահմանափակող և բացառող (exclusive) միգրացիոն քաղաքականու-

<sup>1</sup> Տե՛ս “Create an earthquake: UKIP MANIFESTO 2014” // <http://d3n8a8pro7vhm.cloudfront.net/themes/5308a93901925b5b09000002/attachments/original/1398869254/EuroManifestoLaunch.pdf?1398869254> (accessed 28.06.2014)

<sup>2</sup> Տե՛ս Notre Projet: Programme Politique du Front National // <http://www.frontnational.com/pdf/Programme.pdf> (accessed 28.06.2014)

<sup>3</sup> Տե՛ս Ազգային ճակատ կուսակցության պաշտոնական կայքէջ [frontnational.com](http://frontnational.com), (accessed 28.06.2014)

թյան օրինակներ կարելի է գտնել նաև բազմաթիվ այլ եվրոպական ծայրահեղ աջակողմյան կուսակցությունների ծրագրերում, ինչպես օրինակ՝ «Իրական ֆինները» (“True Finns”), Ազատության կուսակցությունը՝ Նիդեռլանդներում, «Հյուսիսի լիգան»՝ Իտալիայում, Ժողովրդական կուսակցությունը՝ Շվեյցարիայում, Ազատության կուսակցությունը՝ Ավստրիայում, Դանիայի ազգային կուսակցությունը, Շվեդիայի դեմոկրատական կուսակցությունը և այլն:

Իսկ ինչու՞մ է դրսևորվում նշված կուսակցությունների կողմից վախի գործոնի կիրառումը: Չէ՞ որ միգրանտների մեծ հոսքի առկայությունը դեպի եվրոպական երկրներ անհերքելի փաստ է: Հիմնական խնդիրը կայանում է իրականության միակողմանի ներկայացման, և միգրացիայի առաջացրած սոցիալական ու մշակութային փոփոխությունների շեշտադրման մեջ: Ակնհայտ է, որ մեծաթիվ միգրանտների առկայությունը եվրոպական տարբեր երկրներում առաջացրել է նշանակալի սոցիալական փոփոխություններ և իր հետ բերել նաև խնդիրներ, ինչպես օրինակ՝ վերջիններս սոցիալական նպաստների հատկացման հարցը, նրանց կրթության ու հյուրընկալող հասարակության մեջ ինտեգրվելու հարցը: Միաժամանակ աջ ծայրահեղական կուսակցություններն իրենց նախընտրական քարոզարշավների ընթացքում զանց էին առնում միգրանտների կողմից հյուրընկալող հասարակություններին բերած մեծ տնտեսական օգուտների մասին փաստարկները՝ հիմնականում շեշտադրելով նշված խնդիրների վրա և դրանց միջոցով փորձելով վախ առաջացնել միգրանտների նկատմամբ: Այս թեմայի առնչությամբ 2013 թ-ի նոյեմբերի հրապարակված «Ներգաղթի ֆիսկալ ազդեցությունը Միացյալ Թագավորությունում» հետազոտության մեջ շեշտվում է, որ 1999 թ-ից ի վեր Մեծ Բրիտանիա ներգաղթողներն առավել մեծ չափով հարկեր են վճարել,

քան ստացել սոցիալական վճարներ կամ ուղակի իրենց հայրենիք որպես տրանսֆեր: Լոնդոնի Համալսարանական Քոլեջի հետազոտողներ Քրիստիան Դասթման և Թոմաստ Ֆրատինին եզրակացնում են. «2000-ականներից ի վեր ներգաղթյալները զուտ ներդրում են ունեցել հանրային ֆինանսների մեջ. իրականություն, որը նշանակալիորեն հակադրվում է հանրային քննարկումների ժամանակ առաջ քաշվող տեսակետներին»<sup>1</sup>:

Համեմատականներ անցկացնելով Հայաստանում ձևավորվող նմանատիպ դիսկուրսին՝ հարկ է նշել, որ մեր երկրում ևս առկա է վախի գործոնի շահարկում հանրային քննարկումներում, որոնք առնչվում են միգրացիային: Հանրային քննարկումներին բնորոշ են արտագաղթի մասին կենցաղային պատկերացումների շահարկումը և մասնագիտական, փաստական հենքից կտրվածությունը: Մինաժամանակ պետք է ընդգծել, որ հայաստանյան քննարկումները միայն ձևով են առնչվում համաեվրոպական մակարդակում ընթացող միգրացիոն քաղաքականության վերաբերյալ քննարկումներին: Մինչդեռ բովանդակային առումով խնդիրները խիստ տարբեր են. եթե եվրոպական երկրների պարագայում քննարկում ենք ներգաղթի, ապա Հայաստանի պարագայում արտագաղթի հարցը: Հենց միայն այս դիտարկումն արմատականորեն փոխում է քննարկումների ուղղությունն ու բովանդակությունը:

Արդեն իսկ նշեցինք, որ 2014թ-ի եվրոպական խորհրդարանի նախընտրական դիսկուրսում կիրառվել է նաև հակախալամական դիսկուրսը որպես միգրացիոն խնդիրներին անդրադարձի մի տարատեսակ: Այս տեսանկյունից ակնհայտորեն առանձանանում է Նի-

<sup>1</sup> *Stu Dustmann, Christian, and Tommaso Frattini. “The fiscal effects of immigration to the UK.” CReAM DP 22 (2013), էջ 13:*

դեռլանդների «Ազատություն» կուսակցության առաջնորդ Գեերտ Վիլդերսը: Վերջինիս ելույթները մշտապես համեմված են լինում հակաիսլամական հռետորաբանությամբ: Մասնավորապես, իր ելույթներից մեկի ընթացքում Վիլդերսը խոստացել էր իր կողմնակիցներին այնպես անել, որ Նիդեռլանդներում. «լինեն ավելի քիչ մարոկկացիներ»: Այս ծայրահեղ քայլը բավականին մեծ հակազդեցություն էր առաջացրել նիդեռլանդական հասարակության շրջանում. նույնիսկ Վիլդերսի ղեկավարած կուսակցության որոշ անդամներ դուրս էին եկել կուսակցությունից այդ հայտարարությունից հետո: Սոցիալական ցանցերում ձևավորված «Ես բողոք ունեմ Վիլդերսի դեմ» խումբը մեկ օրվա ընթացքում շուրջ 48000 հետևորդ է ձեռք բերել: Վիլդերսի հայտարարությանն արձագանքել է նաև Նիդեռլանդների վարչապետ Մարկ Ռյուտտեն՝ասելով, որ նա. «չափն անցել է»<sup>1</sup>: Չնայած նմանատիպ սկանդալային հայտարարություններին ու պահվածքին «Ազատության» կուսակցությունը Նիդեռլանդներում հավաքեց ձայների 12.2%-ը՝ գրավելով երրորդ տեղը<sup>2</sup>: Չնայած սա որոշակի հետընթաց էր կուսակցության համար, միաժամանակ կարելի է պնդել, որ նիդեռլանդական հասարակության շրջանում կա որոշակի զանգված, որն ընկալունակ է նմանատիպ ծայրահեղական հակաիսլամական ուղերձների հանդեպ: Սակայն չի կարելի նաև

հաշվի չառնել այն բացասական արձագանքը, որ ձևավորվեց հակաիսլամականության ծայրահեղ դրսևորումների հանդեպ:

Նմանատիպ միտում դրսևորվեց նաև Մեծ Բրիտանիայում, որտեղ քաղաքական սպեկտրի առավել ծայրահեղ աջակողմյան կուսակցությունը՝ Բրիտանական ազգային կուսակցությունը (British National Party) բավականին մեծ կորուստներ կրեց վերջին համաեվրոպական ընտրությունների ընթացքում, նույնիսկ այդ կուսակցության առաջնորդ Նիք Գրիֆֆինը գրկվեց եվրոպական խորհրդարանում իր տեղից<sup>3</sup>: BNP-ն հենց այն կուսակցությունն էր, որ հանդես էր գալիս առավել արմատական հակաիսլամական դիրքերից Մեծ Բրիտանիայում: 2014թ-ի համաեվրոպական ընտրությունների իրենց նախընտրական անիմացիոն գովազդում Բրիտանիայի մահմեդականները ներկայացվում են որպես սոցիալապես վտանգավոր տարրեր, ովքեր պատրաստ են քրեական հանցանքներ գործել, և ումից շարքային բրիտանացիները պետք է վախենան: Այս տեսահոլովակը ցուցադրվել է Մեծ Բրիտանիայում մեծ հեղինակություն վայելող BBC և ITV հեռուստաալիքներով քաղաքական գովազդի ժամերին<sup>4</sup>: Այսպիսով, պետք է նշենք, որ հակաիսլամականությունը որպես միգրացիային առնչվող դիսկուրսի կարևոր տարր մի շարք եվրոպական երկրներում նաև որոշակի հետնահանջ է արձանագրում: Միաժամանակ հակաիսլամական միտումները չեն կարող

<sup>1</sup> Տե՛ս «Dutch politician Geert Wilders takes aim at Maroccans and sparks outrage» // The Guardian ,<http://www.theguardian.com/world/2014/mar/20/dutch-politician-geert-wilders-moroccans-outrage-pvv-party-anti-islam> (20 March 2014: accessed 30.06.2014)

<sup>2</sup> Տե՛ս *Waterfield, B.*, «European elections upset for Geert Wilders as Dutch turn cold on anti-EU party» // The Telegraph, <http://www.telegraph.co.uk/news/worldnews/europe/netherlands/10850610/European-election-upset-for-Geert-Wilders-as-Dutch-turn-cold-on-anti-EU-party.html> (22 May 2014: accessed 30.06.2014)

<sup>3</sup> Տե՛ս *Churche, J. & Hurst, P.* «European election results 2014: BNP leader Nick Griffin loses seat», // The Independent, <http://www.independent.co.uk/news/uk/politics/european-election-results-2014-bnp-leader-nick-griffin-loses-seat-9434204.html> (26 May 2014: accessed 30.06.2014):

<sup>4</sup> Տե՛ս, *Pitt, B.*, «BNP's proposed election forecast features vile anti-Muslim animation», <http://www.islamophobiawatch.co.uk/bnps-proposed-election-broadcast-features-vile-anti-muslim-animation/> (26 April 2014: accessed 30.06.2014)

արհամարհվել, քանի որ դրանք նաև էական խթան հանդիսացան Եվրոպական խորհրդարանի վերջին ընտրություններում «բողոքական քվեի» (protest vote) ձևավորման և ծայրահեղ աջակողմյան կուսակցությունների առաջընթացի համար: Համեմատականներ անցկացնելով Հայաստանում նույնական դիսկուրսի հետ կարող ենք արձանագրել նաև, որ հակաիսլամականությունը հայաստանյան հանրային դիսկուրսում որպես այդպիսին բացակա է, իսկ միգրացիոն դրսևորումների հետ որևէ առնչություն չունի: Սա նույնպես վկայում մեր կողմից արդեն իսկ նշված այն մտքի մասին, որ միգրացիային առնչվող հանրային ու քաղաքական դիսկուրսը Հայաստանում նշանակալիորեն տարբերվում է Եվրոպական երկրներում ծավալված նմանատիպ դիսկուրսից:

Երրորդ կարևոր հանգամանքը, որ դրսևորվել է միգրացիային առնչվող հանրային-քաղաքական դիսկուրսում վերջին համաեվրոպական ընտրություններում սոցիալ-տնտեսական իրականությունից այդ դիսկուրսի կտրվածությունն էր ու դրան անհամապատասխանությունը: Այս երևույթը ևս բնորոշ է պոպուլիստական դիսկուրսին, որը ուղղված է հանրային-քաղաքական կյանքի, իսկ տվյալ դեպքում միգրացիոն երևույթների պարզունակ ընկալմանը, որն ուղղված է մարդկանց «բնագդային ընկալումներին»՝ բարդ խնդիրներին առաջարկելով հեշտ ու պարզունակ լուծումներ<sup>1</sup>: Նշված հանգամանքին արդեն իսկ անդրադարձանք վերևում՝ ցույց տալով, թե ինչ տնտեսական նշանակալի ներդրում են կատարում միգրանտները Մեծ Բրիտանիայի տնտեսական համակարգում: Եվրոպական խորհրդարանի վերջին ընտրությունների նախընտրական քարոզարշավի ընթացքում բարձրաձայնվում

էին նաև բազմաթիվ մտահոգություններ այն մասին, որ ԵՄ-ին նոր անդամակցած պետություններից, մասնավորապես, Ռումինիայից, Բուլղարիայից և Խորվաթիայից, եկող էժան աշխատուժը կարող է ողողել «հին Եվրոպայի» աշխատաշուկաները և զրկել տեղացիներին աշխատանքին: Այս մասին մտահոգություններ բարձրացնում էին ինչպես UKIP կուսակցության նախագահ Նայջել Ֆարաժը, այնպես էլ Ֆրանսիայի «Ազգային ձակատի» առաջնորդ Մարին Լրպենը, ինչի մասին արդեն իսկ նշվել է վերևում: Այս հարցադրմանը համապատասխան անդրադարձ կատարելու համար անդրադառնանք ԵՄ նախորդ՝ 2004թ-ի ընկալմանը, որի ժամանակ ևս բազմաթիվ էին «հին Եվրոպայի» աշխատաշուկաների արմատական վերափոխման մասին խոսակցությունները: Եվրոպական Հանձնաժողովի տնտեսական և ֆինանսական հարցերի գլխավոր դիրեկտորատը այս հարցի առնչությամբ հետազոտություն է իրականացրել դեռևս 2008թ-ին, որում նշված հարցադրման համապատասխանությունը տնտեսական իրականության հետ չհիմնավորված է համարել: Հետազոտությունը եզրակացնում է նաև, որ չնայած ընդլայնմանը, «հին Եվրոպայի» անդամ 15 պետությունների միջև միգրանտների տեղաշարժը ավելի նշանակալի է եղել, քան 2004 թ-ի ընդլայնման արդյունքում ԵՄ-ին միացած նոր 10 անդամներից դեպի «հին Եվրոպա» միգրանտների տեղաշարժը: «Ընդհանուր առմամբ, այնուամենայնիվ, այս տեղաշարժերը նպաստել են տնտեսական աճին: Մեր հետազոտության արդյունքներով կարող ենք եզրակացնել, որ ԵՄ 25-ի ներսում վերջին շրջանի շարժունակության աճը նպաստել է ընդհանուր ՀՆԱ-ի աճին շուրջ 0.3%-ով: Ընդլայնված ԵՄ-ի համար այս թիվը կազմում է շուրջ 30 միլիոն եվրո», - եզրակացնում են հետազոտու-

<sup>1</sup> Տե՛ս *Mudde Cas*. The populist zeitgeist, // *Government and Opposition* 39, No. 4 (2004), էջ 542-563:



թյան հեղինակները<sup>1</sup>: Ակնհայտ է դառնում, որ այս պարագայում ևս պոպուլիստական դիսկուրսին բնորոշ ձևով եվրոպական աջ ծայրահեղական կուսակցությունները կրկին փորձում են պարզունակացնել իրականությունը կամ այն առնվազն ներկայացնել միակողմանի՝ չշեշտելով այն տնտեսական օգուտները, որ եվրոպական երկրները կարող են ստանալ ներգաղթյալների շնորհիվ: Կրկին փորձելով համեմատականներ անցկացնել Հայաստանում ընթացքով նմանատիպ հանրային-քաղաքական քննարկումների հետ կարող ենք նշել, որ այս երևույթը բնորոշ է հայաստանյան դիսկուրսին: Հայաստանում արտագաղթի կամ ներգաղթի մասին պատկերացումները հիմնական կառուցվում են առասպելային-կենցաղային քննարկումների դաշտում առանց մասնագիտական վերլուծությունների իրականացման, ինչն սովորաբար հանգեցնում է դիսկուրսի և սոցիալ-տնտեսական ու քաղաքական իրականության տարբերակվածության: Սակայն, սա մեկ այլ հոդվածի նյութ է և դուրս է գալիս քննարկվող թեմայի շրջանակներից, այդ պատճառով էլ հանգամանալից անդրադարձ չենք կատարի այդ հարցի վրա:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ Եվրոպական խորհրդարանի վերջին ընտրություններում միգրացիային առնչվող հանրային-քաղաքական

դիսկուրսը լայն ընդգրկում է ստացել: Այն հիմնականում կիրառվել է աջ ծայրահեղական կողմնորոշում ունեցող քաղաքական ուժերի կողմից, իսկ ընտրություններում նրանց արձանագրած բավականին նշանակալի արդյունքների համատեքստում կարող ենք նշել, որ դրա կիրառումը լայն արձագանք է գտել նաև մի շարք եվրոպական երկրների հասարակությունների շրջանում: Այս աշխատանքում մենք առանձնացրել ենք այն երեք հիմնական ուղղությունները, որոնցով կիրառվել է միգրացիային առնչվող հանրային-քաղաքական դիսկուրսը, այն է՝ որպես վախի և «սպառնալիքի» ձևավորման գործիք, հակաիսլամականության տարածման նպատակով, ինչպես նաև շահագործվել է այդ դիսկուրսի և սոցիալ-տնտեսական ու քաղաքական իրականության անհամապատասխանությունն ու իրարից կտրվածությունը: Որոշակի համեմատականներ ենք անցկացրել Հայաստանում ծավալվող նմանատիպ դիսկուրսի հետ ու եզրակացրել, որ կիրառության առնվազն առաջին երկու եղանակները համապատասխան չեն հայկական իրականությանը, իսկ երկրորդը բնորոշ է նաև միգրացիային առնչվող հայաստանյան դիսկուրսին: Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ Հայաստանի պարագայում այս թեման հավելյալ հետազոտության կարիք ունի:

<sup>1</sup> Stü D'Auria, Francesca, Kieran Mc Morrow, and Karl Pichelmann, "Economic impact of migration flows following the 2004 EU enlargement process—A model based analysis" // No. 349. Directorate General Economic and Monetary Affairs (DG ECFIN), European Commission, 2008, էջ 18:

МИГРАЦИОННЫЙ ДИСКУРС В ЕВРОПЕЙСКИХ СТРАНАХ:  
ПРИМЕР ВЫБОРОВ В ЕВРОПЕЙСКИЙ ПАРЛАМЕНТ 2014 ГОДА

**КАЗАРЯН АРМЕН**

*Советник по политико-экономическим вопросам  
посольства Польши в Республике Армения.*

В статье рассматривается использование темы миграции и евроскептицизма в общественном и политическом дискурсе некоторых европейских стран в контексте выборов в Европейский парламент 2014 года. Особо отмечается широкое использование данного дискурса представителями радикально правых партий. Из методов применения данного дискурса были выделены три основных: как источника угрозы и страха, источника исламофобии и отчуждения данного дискурса от социально-экономических и политических реалий. Некоторые сравнения были проведены с армянскими реалиями использования миграционного дискурса.

MIGRATION DISCOURSE IN EUROPEAN COUNTRIES:  
THE EXAMPLE OF 2014 EUROPEAN PARLIAMENT ELECTIONS

**ARMEN GHAZARYAN**

*RA Embassy of Poland,  
Advisor of Political and Economic Affairs*

The article touches upon the issue of the application of the political and societal discourse on the issues of migration and euroscepticism in the context of the European Parliament elections of 2014. The wide use of the mentioned discourse and argumentation connected with migration was particularly exploited by far right parties. Three specific methods of the application of this discourse have been discussed: depicting migration as a source of “threat” and fear, as a source of islamophobia and exploiting the fact that the discourse was often alienated from socio-economic and political realities. Some parallels have been drawn with the discourse on migration in Armenia.

Key words – migration, political discourse, societal discourse, European parliament, European elections, far-right parties, populism, islamophobia, euroscepticism